ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու
մարզի Արջուտ համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ. 093 19 91
34 , arjut.lori@mta.gov.am

N ԳԱ97
23 դեկտեմբեր 2016թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու թիվ 24-Ն որոշումը:

23.12.2016

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. `

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

22.12.2016թ. թիվ 24-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի 2017-2021թվականների սոցիալ-տնտեսական հնգամյա ծրագիրը:

Ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Բաբայան Տիգրան			
Դալլաքյան Վազգեն			
Խոյեցյան Հովհաննես			
Մկրտչյան Սաթենիկ			
Շահինյան Անդրանիկ			

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Վարդան Մկրտչյանը

Քննարկվել և հաստատվել է Արջուտ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի թիվ 24-Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

2.Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2.Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

5.ՀՀԶԾ մոնիթորինգ

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

_Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի հիմնական ուղղվածությունը պետք է լինի յուրաքանչյուր տնտեսության զարգացումը անհատապես, պետք է ստեղծել պայմաններ և հնարավորություններ, որ յուրաքանչյուր բնակիչ կարողանա օգտագործել իր ձեռքի տակ գտնվող բոլոր ռեսուրսները, ամենակարևորը՝ իր սեփական հողատարքծը մշակելով ստանա առավելագույն արդյունք՝ օգտագործելով նոր, արդիական տեխնոլոգիաներ:

Քանի որ համայնքը ունի շատ քիչ վարելահողեր, ոևրոնք սեփականաշնորհումից հետո մասնատվել են փոքր կտորների, ուստի պետք է առաջ քաշել կոլեկտիվ աշխատելու գաղափարը, հողատարածքների համատեղ միավորված մշակումը՝ օգտոգրծելով նոր տեխնոլոգիա և նոր սերմեր, ինչպես նաև օգտագործել համայնքի բնական իրավիճակը՝ շատ արևային օրեր և ավելացնել ջերմոցային տնտեսությունների քանակը: Համայնքում ստեղծել աշխատանքի և հանգստի այնպիսի պայմաններ, որ երիտասարսությունը ձգտի մնալ և ապրել համայնքում:Կառուցել խաղահրապարակներ, հանդիսությունների սրահ, ապահովել համայնքում փողոցային լուսավորություն, աշխատացնել նախադպրոցական հաստատությունը՝ մանկապարտեզը, հնրավորինս բարենորոգել ներհամայնքային ճանապարհները: Նմանատիպ արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է օգտագործել համայնքում առկա բոլոր ռեսուրսները՝ հեռագնա արոտավայրերը, զարգացնել տոհմային անասնաբուծությունը, օգտագործել համայնքի տարածքով անցնող միջպետական ավտոմայրուղին, որին հարակից կառուցել վաճառքի տաղավարներ, որպեսզի համայնքի բնակիչը կարողանա իր ստեղծած բարիքները վաճառել: Համայնքի զարգացման գերակա խնդիրը համարվում է առկա ռեսուրսների օգտագործումը, որի արդյունքում համայնքի բնակիչները կունենան զբաղվածություն և կհամալրվի համայնքային բյուջեն:

Համայնքում առկա են բազում պրոբլեմներ, որոնցից առաջնայինը աշխատատեղերի պակասն է, փոքրիկ հողակտորները չեն կարող ապահովել կայուն եկամուտ, ուստի անհրաժեշտ է ստեղծել գյուղմթերքների

վերամշակման արտադրամասեր և նոր աշխատատեղեր, որոնց խոչնդոտ է հանդիսանում համայնքի նորաստեղծ լինելը, գյուղտեխնիկայի պակասը, բնակիչների աղքատությունը, համայնքային բյուջեի պակասը, արտագաղթը, կոմունալ կենցաղային պայմանների բացակայությունը, գրավչությունը ներդրումների համար, խմելու և ոռոգման ջրերի պակասը: Նշված խոչնդոտների պատճառը բնակիչների թերհավատությունն է իշխանության ոչ ճիշտ տնտեսական քաղաքականության նկատմամբ:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի նախագիծը մշակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ մանրամասն ուսումնասիրելով համայնքի բոլոր հնարավորությունները,առկա և սպասվելիք եկամուտները՝ գնահատելով իրավիճակը, այնուհետև համայնքի ավագանու հետ քննարկվում է ծրագրի նախագիծը, նոր առաջարկությունների դեպքում վերանայվում է ծրագիրը և հաջորդ նիստին ներկայացվում է համայնքի ավագնուն, հավանության արժանանալուց հետո հաստատվում է ավագանու կողմից և համարվում համայնքի զարգացման գլխավոր ուղեցույց և փաստաթուղթ:

Համայնքի իրավիճակի նկարագրությունը

2.1 Համայնքի ընդհանուր նկարագիրը

Արջուտ համայնքը որպես համայնք ձևավորվել է 1989 թվականին, ազգամիջյան հարաբերություններից հետո, որը բնակեցվել է Ադրբեջանից բռնագաղթված բնակիչներով և ՀՀ տարբեր բնակավայրերից ներգաղթված բնակիչներով: Համայնքը գտնվում է ՀՀ հյուսիսային շրջանում՝ Լոռու մարզում, Վանաձոր քաղաքից հյուսիս-արևմուտք, ունի 3613.02 հա վարչական տարածք, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝3254.11 հա, բնակավայրերի հողեր՝162.18 հա, արդյունաբերական հողեր՝ 60.34 հա, էներգետիկայի և տրանսպորտի հողեր՝ 11.73 հա, հատուկ պահպանության տարածքներ՝ 5.41 հա, հատուկ նշանակության հողեր՝ 0.79 հա /դպրոց/, անտառային հողեր՝ 111.70 հա, ջրային ֆոնդի հողեր՝ 6.06 հա: Ներկա պահին բնակչությունը կազմում է 1380 մարդ, որից՝ 699 կին, 681 տղամարդ, 158 փախստական, որոնցից ՀՀ քաղաքացիություն են ստացել 137 մարդ, համայնքի տնտեսությունների թիվն է 680:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է շուրջ 30 մլն դրամ:

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 20 տոկոս:

Համայնքի բնակչությունը արտադրում է հիմկնականում գյուղմթերքներ և վաճառում Վանաձոր քաղաքի շուկայում:

Համայնքում առկա է 5-րդ դարի խաչքար:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց՝ 100 աշակերտով և 25 մանկավարժով, ունի չգործող մանկապարտեզ:

Համայնքում գործում է բուժկետ՝ 1 բուժքույրով, որի աշխատանքները կցված են ԳՈՒԳԱՐՔ ԿՊՊ-ին:

Համայնքի 83 ընտանիքներ ընդգրկված են ընտանեկան նպաստների համակարգում:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

1.Համայնքի փողոցային լուսավորություն

2017 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում նախատեսվում է վերականգնել համայնքի փողոցային լուսավորությունը, համայնքային բյուջեի հաշվին թվով 60 լապտերների տեղադրում, որն ունենալու է շարունակական բնույթ և յուրաքանչյուր տարի ավելացնելով լապտերների քանակը՝3 տարվա ընթացքում համայնքն ամբողջությամբ ապահովել գիշերային լուսավորությամբ՝ թվով 240 լապտեր:

2.Համայնքի մանկապարտեզի վերանորոգում և բացում

Համայնքում առկա է մանկապարտեզի շենք՝ կառուցված 1991 թվականին ժամանակավոր թեթև կոնստրուկցիայով, որը պահպանված է և որոշակի վերանորոգման աշխատանքներից հետո կարող է լիարժեք գործել: Անհրաժեշտ է կատարել կոսմետիկ վերանորոգում, գազաֆիկացնել, վերականգնել էլեկտրականությունը, անցկացնել խմելու ջրագիծ, ձեռք բերել նոր գույք, որի համար անհրաժեշտ է 12 մլն դրամ: Ենթածրագրի իրականացման համար պահանջվող ֆինանսական ներդրումները ակնկալում ենք պետական բյուջեից:

3.Գյուղտնտեսական ռեսուրսների ամբողջական օգտագործում

Համայնքի գյուղատնտեսական հնարավորությունները օգտագործելու համար անհրաժեշտ է համայնքում ձևավորված <<Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում>> սպառողական կոոպերատիվին աջակցել, ՍԿ-ի զարգացմանը, որի համար համայնքապետարանը տրամադրում է իր ունեցած ամբողջ գյուղտեխնիկան, արոտավայրերը և անասնագոմերը: Կոոպերատիվի զարգացումից է կախված համայնքի բնակչությանը աշխատանքով ապահովելը: Կոոպերատիվի և համայնքի ղեկավարի կողմից մշակվել է Կոոպերատիվի զարգացման ծրագիր և ներկայացվել է ՀՀ վարչապետին:Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է 50 մլն դրամ նպատակային վարկ տրամադրել համայնքին կամ կոոպերատիվին՝ համայնքապետարանի և կառավարության երաշխավորությամբ՝ 10 տարի ժամկետով: Ծրագրի իրականացման արդյունքում կլուծվի 150-200 ընտանիքի

զբաղվածության հարցը, կհամալրվի համայնքային բյուջեն, կնվազի արտագաղթը և համայնքը կունենա մշտական, կայուն եկամուտ, ինչպես նաև ծրագիրը կավելացնի իր ծավալները և դուրս կգա համայնքի սահմաններից դուրս: Ծրագրի իրականացումը օրինակ կլինի ՀՀ այլ համայնքների համար:

Համայնքը սերտ համագործակցում է CISP կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի հետ: <Միգրացիայի դերը համայնքի զարգացման շրջանակներում> գրանտային ծրագրից համայնքում գործող Կոոպերատիվը օգտվել է և շահել, ներկա պահին համագործակցում է <<Սփյուռքի դերը համայնքների զարգացման ծրագրին>> կազմակերպության հետ:

4.Համայնքի վարչական տարածքում <Բակտեկ-Էկո>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել բազմամետաղ հանքարդյունաբերություն, որտեղ ըստ ներկայացված ծրագրի բացվելու է 120-150 նոր աշխատատեղ: Հանքարդյունաբերությունը, ինչպես գիտենք, համարվում է էկոլոգիապես ոչ մաքուր աշխատանք, սակայն 2 տարվա ընթացքում բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել գործարանի տեղի ընտրության համար, գործարանի տեղ ընտրելուց հետո անցկացվել են հանրային լսումներ և կազմվել է համապատասխան եզրակացություն բնապահպանների կողմից, որ գործարանի շահագործումը ոչ մի վատ ազդեցություն չի կարող ունենալ համայնքի վրա: Ըստ <Բակտեկ Էկո> ՍՊԸ-ի ներկայացրած ծրագրի՝ հանքը և գործարանը շահագործելուց հետո ստացված զուտ եկամտի 10 տոկոսի չափով յուրաքանչյուր տարի համայնքում իրականացվելու են սոցիալական ծրագրեր: Նոր աշխատատեղերը և սպասվելիք ծրագրերի իրականացումը կլավացնեն բնակիչների սոցիալական վիճակը, համայնքը համընթաց կզարգանա և կհամալրվի համայնքային բյուջեն:

5.Համայնքային կենտրոնի վերակառուցում

1989 թվականից՝ Արջուտ համայնքի ձևավորումից համայնքը չունի ադմինիստրատիվ շենք, նախկին խորհտնտեսության վարչական շենքը երկրաշարժի ժամանակ համարվել է վթարային և 1991 թվականի սեփականաշնորհման ժամանակ վաճառվել էր քաղաքացու վրա: 2012 թվականին համայնքապետարանը իր բյուջեի հաշվին ձեռք է բերել նշված շենքը և նպատակ ունենք վերակառուցելու որպես համայնքային կենտրոն, որտեղ տեղակայվելու է համայնքապետարանը, ակումբը, գրադարանը, փոստը,ոստիկանության համար սենյակ, սպորտդահլիճ և սպորտհրապարակ: Համայնքային բյուջեի հաշվին կազմվել է նախագծանախահաշվային փաթեթ և

ներկայացվել է Լոռու մարզպետին:Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 25-30 մլն դրամն, որը ակնկալում ենք մարզպետարանի աջակցությամբ ցանկացած ֆինանսական աղբյուրից:

6.Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում

Համայնքը իր 28 տարվա գոյության ընթացքում չի կարողացել ներհամայնքային ճանապարհների կապիտալ վերանորոգում իրականացնել բյուջեի պակասի պատճառով: Ամենամյա իրականացվել են փոստային նորոգումների գրունտով, որը գարնան և աշնան հեղեղումներից քանդվում է: Խնդրի լուծման համար համայնքի բյուջեի հաշվին կազմվել է նախագծանախահաշվային փաթեթ՝ միայն կենտրոնական փողոցի համար՝ 2700 մետր: Համայնքի կենտրոնական փողոցը ասֆալտապատելու համար անհրաժեշտ է 250-300 մլն դրամ, որը ակնկալում ենք կառուցել համայնքի, պետբյուջեի և <Բակտեկ Էկո> ՍՊԸ-ի ֆինանսավորմամբ:

7.Խմելու ջրագծերի վերանորոգում

Համայնքը չունի կենտրոնացված ջրամատակարարում, բնակիչները իրենց ուժերով՝ խումբ-խումբ բնական աղբյուրներից ջուրը հասցրել են իրենց տները: Համայնքապետարանը իր բյուջեի և ՀՕՄ-ի օգնությամբ իրականացրել է խմելու ջրագծի ծրագիր, որը ֆինանսական միջոցների պակասի պատճառով մնացել է կիսաավարտ: Ծրագիրը նախատեսվում է շարունակել և ավարտին հասցնել մինչև 2020 թվականը, որի համար անհրաժեշտ է մոտավորապես 20 մլն դրամ: Դիմել ենք մի քանի միջազգային դոնոր կազմակերպությունների և կան դրական արձագանքներ: Դոնոր կազմակերպությունների և համայնքի բնակիչների ուժերով այն կիրականացվի և համայնքը 80 տոկոսով կապահովվի խմելու մշտական ջրով: Մնացած 20 տոկոսին ապահովելու համար նախատեսվում է օգտագործել արտեզյան հորեր՝ թվով 5 հատ, յուրաքանչյուր արտեզյան հորի համար պահանջվում է 1.5 մլն դրամ, որը իրականացնելու ենք համայնքային բյուջեի հաշվին:

8.Ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցում

Համայնքի ոռոգման ջրագիծը կառուցվել է 2000 թվականին, ինքնահոս եղանակով գալիս է հարևան Հալավար համայնքից, որից օգտվում են Դարպաս և Լեռնապատ համայնքները: Ոռոգման սեզոնի ավարտից հետո ջուրը օգտագործվում է <Լեռ և ջուր> ՍՊԸ-ի կողմից որպես հիդրոկայան: Ներկա պահին ոռոգման ցանցի տակ կա ընդամենը

40 հա վարելահող և տնամերձ, եթե կառուցենք 1500 գծամետր ոռոգման ջրագիծ, կունենանք80-100 հա ոռոգվող տնամերձ և վարելահող: Ջրագիծը կառուցելու համար անհրաժեշտ է մոտավորապես 5 մլն դրամ, որի կառուցման համար համայնքը կարող է ներդնել պահանջվող գումարի 20 տոկոսը: Ծրագրի իրականացման համար պահանջվող գումարի համար դիմելու ենք հավանական բոլոր կազմակերպություններին և անհատ անձանց, նախատեսվում է այն ավարտին հասցնել 2020-2021 թվականներին:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեն՝

1.Եկամուտների գծով՝ 30320.9 հազար դրամ

Այդ թվում՝

վարչական բյուջեի մասով՝30320.9 հազար դրամ

ֆոնդային բյուջեի մասով՝ ----

2.Ծախսերի գծով՝30320.9 հազար դրամ

Այդ թվում՝

Վարչական բյուջեի մասով՝30320.9 հազար դրամ

Ֆոնդային բյուջեի մասով՝ ---- :

Համայնքային բյուջեն տարեց-տարի համալրվելու է <Արջուտ համայնքի> արոտօգտագործողների միավորում Սպառողական Կոոպերատիվի զարգացմանը զուգընթաց, որի ընթացքում կօգտագործվի համայնքի չօգտագործվող ռեսուրսները, Վանաձոր-Երևան ավտոմայրուղու հարակից կազմակերպվող տաղավարներից ստացվող վարձավճարները:

Նախատեսում ենք ստեղծել համայնքի զարգացման հիմնադրամ, որտեղ ներգրավել համայնքի նախկին բնակիչներին, բարերարներին:

2.5.Զարգացման խոչընդոտները և դժվարությունները

Համայնքի զարգացման խոչընդոտ է համարվում բնակչության հավատի և վստահության կորուստը գործող տնտեսական քաղաքականության նկատմամբ, ինչպես ՀՀ համայնքների, այնպես էլկ մեր համայնքի բյուջեի պակասը, աշխատատեղերի պակասը, արտագաղթը, սեփականաշնորհումից հետո ավերված և քանդված տնտեսությունը, երկրաշարժից հետո չի վերականգնվել ոչ մի բան, քանի որ Արջուտ համայնքը հանվել է երկրաշարժի վերակառուցման գոտուց համայնքի նախկին /թուրք/ բնակիչներ չլինելու պատճառով: Մինչ օրս համայնքը չունի որևէ ադմինիստրատիվ շենք, համայնքապետարանը գործում է համայնքի բուժ ամբուլատորիայի համար կառուցված ժամանակավոր կացարանում: Նշված խոչընդոտները վերացնելու համար անհրաժեշտ է իրականացնել համայնքի զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված ենթածրագրերը: Նախ պետք է օգտագործել համայնքի բոլոր և մարդկային և այլ ռեսուրսները, օգնել Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվին իր զարգացման գործում, որտեղ կան լավ նվիրյալ գյուղատնտեսական մասնագիտություններ ունեցող երիտասարդներ, ստեղծել համայնքում ներդրումային մթնոլորտ, ներդրում անողներին տալ որոշակի արտոնություններ՝ նոր աշխատատեղեր բացելու պայմանով, օգտագործել այլ երկրներում ապրող համայնքի նախկին բնակիչների և սփյուռքի հնարավորությունները: Համայնքում առկա, բայց չգործող մանկապարտեզի վերաբացումը և համայնքային կենտրոնի կառուցումը կաշխուժացնի համայնքի երիտասարդությանը, կխթանի ծնելության աճի բարձրացմանը, կբացվեն նոր աշխատատեղեր: Բնակչությանը մշտական եկամտով ապահովելը կախված է կոոպերատիվի զարգացումից, որտեղ հստակ նշվում է ինչպես բնակիչներին ներգրավել կոոպերատիվի կողմից մշակված և ներկայացված ծրագրում: Համայնքապետարանը համայնքի բնակիչների կողմից առաջարկվող ցանկացած միտք և առաջարկ ընդունում և քննարկում է, մշակում և դարձնում է ծրագիր՝ հետագայում լուծում տալու համար: Ներկայացված խնդիրների լուծման համար միայն համայնքի բյուջեն և ներուժը չի բավարարի, ուստի անհրաժեշտ է ՀՀ կառավարության ուշադրությունը և նպատակային ներդրումները՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը իրականություն դարձնելու համար:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերը

1.Տարբեր մասնագիտություններ ունեցող աշխատուժ

2.քաղաքամերձ համայնք, միջպետական ավտոճանապարհ, երկաթուղի

3.բազմամետաղ հանքային պաշարներ

Համայնքի թույլ կողմերը

1.Երկրաշարժի գոտու զարգացման ծրագրից դուրս մնալը

2.Զրոյից ստեղծված նոր տնտեսություն /1989թ/

3.Գյուղատնտեսական վարելահողերի պակաս՝ 1 հողաբաժինը կազմում է 0.4 հա՝ներառյալ տնամերձը

4.Գյուղտեխնիկայի պակաս՝ 2 անիվավոր տրակտոր, 1 հացահատիկի կոմբայն, 1 շարքացան, 1 չիզել, 1 ֆրեզ, 1 սրսկիչ

5.Բնակչության անվստահություն

6.Ֆինանսական ներդրումների պակաս

7.չգործող մանկապարտեզ

8. դպրոցի շենքի ոչ բավարար վիճակ /չկա մարզադահլիճ/

9.քանդված ներհամայնքային ճանապարհ՝ 30 կմ

10.խմելու ջրի պակաս՝ բնակչության 60%, ոռոգման ջրագծերի պակաս՝ բնակչության 80%

Հնարավորություններ

1.Աշխարհագրական դիրք /շատ արևային օրեր/

2.Համայնքային բյուջե

3.Մարդկային ռեսուրս

4.Ներդրողներ, միջազգային ծրագրերի հետ աշխատելու փորձ

Սպառնալիքներ

1.Արտագաղթ

2.Ծնելության պակաս

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման նպատակն է ունենալ զարգացած, ժամանակակից, բարեկարգ, լուսավոր, տնտեսապես կայուն եկամուտ և զբաղվածություն ունեցող համայնք:

Համայնքի տնտեսական կայուն եկամուտ և զբաղվածություն կարող է ունենալ Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվի զարգացումը, որի զարգացման արդյունքում կունենանք 150-200 ինքնաբավ տնտեսություն, ինչպես նաև զարգացած գյուղատնտեսություն, բնակիչների եկամուտների աճը կարող է հասնել 30 տոկոսի: Սպառողական կոոպերատիվի զարգացման համար համայնքապետարանը տրամադրելու է ունեցած գյուղտեխնիկան, արոտավայրերը և անասնագոմերը, իսկ կոոպերատիվի ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է 50 մլն դրամ: Սպառողական կոոպերատիվի զարգացմանը զուգընթաց կօգտագործվի գյուղատնտեսական հողատարածքներ, համայնքային ենթակայության շարժական և անշարժ գույքի վարձակալությունից կհամալրվի բյուջեն, որի աճը 5 տարվա ընթացքում կավելանա 8 տոկոսով: Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացումը կբարձրացնի բնակչության վստահությունը, վերաբերմունք իշխանությունների նկատմամբ, հավատ վաղվա օրվա նկատմամբ, կտեսնի իր երեխայի ապագան տվյալ համայնքում: Արտաքին ներդրումների արդյունքում կզարգանա համայնքում հանքարդյունաբերությունը, որտեղ կբացվեն 50-100 նոր աշխատատեղեր, ինչը կնպաստի բնակչության եկամուտների աճի ավելացմանը:

Հանքարդյունաբերության շահագործման արդյունքում համաձայն <<Բակտեկ Էկո>> ՍՊԸ-ի ներկայացրած եկամտի 10 տոկոս ամենամյա սոցիալ-տնտեսական ծրագրեր, որը ըստ կանխատեսումների կազմում է 50 մլն դրամ:

Համայնքում գյուղմթերքների բացօթյա վաճառք կազմակերպելու համար նախատեսվել է միջպետական ավտոմայրուղու վրա կառուցել առևտրի տաղավարներ, և համապատասխան վարձավճարի դիմաց տրամադրել համայնքի բնակիչներին՝ առևտուր կազմակերպելու համար, որի արդյունքում բնակչությունը կունենա հնարավորություն իր ապրանքները վաճառելու առանց միջնորդների, իսկ համայնքային բյուջեն կհամալրվի 5 տոկոսով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է գնել առկա տաղավարները և վերանորոգել, ինչը կազմում է 5 մլն դրամ:

Ոռոգման ջրագծի ներքին ցանցի կառուցման արդյունքում կունենանք 80-100 հա ջրովի տարածք և գյուղատնտեսական մթերքների որակի բարձրացման և աճի ավելացում 15 տոկոսով:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման արդյունքում յուրաքանչյուր տարի համայնքում կնվազի աղքատությունը 3-5 տոկոսով, համայնքի սեփական եկամուտները կաճեն տարեկան 5-8 տոկոսով, կնվազի արտագաղթը և ներդրումային պայմաններ ստեղծելու շնորհիվ կավելանա բնակչության թվաքանակը:

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները

1.Նախատեսվող փողոցային լուսավորության համար անհրաժեշտ է կառուցել հենասյուներ, գտնել արդիական լուսատուներ, կազմել համապատասխան պայմանագրեր, դիմել էլ ցանց՝ համապատասխան աշխատանքների թույլտվություն ստանալու համար, կազմել համապատասխան նախագծանախահաշվային փաթեթ, գտնել ավելի մատչելի շինարարական կազմակերպություն, որտեղ աշխատանքի համար անպայման ընդգրկված լինեն համայնքի բնակիչներ և իրականացնել ծրագիրը:

2.Գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործումը լիարժեք ապահովելու համար անհրաժեշտ է Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվին տրամադրել համայնքի շարժական և անշարժ գյուղատնտեսական գույքը /տրակտոր, կցասայլակ, գութան, փոցխ, կուլտիվատոր, հավաքող-հակավորող սարք <John deer> ֆիրմայի և անասնագոմեր սարում/, պետբյուջեից տրամադրել նպատակային 50 մլն վարկ՝ 10 տարի մարման

ժամկետով, օգնել համապատասխան պայմանագրերի կնքման, փաստաթղթերի ձևակերպման, շահառու բնակիչների ընտրության գործում: Վերահսկողություն սահմանել կոոպերատիվի գործունեության վրա մինչև պայմանագրային պարտականությունների ավարտը:

3.Միջպետական ավտոմայրուղու վրա վերակառուցել վաճառքի տաղավարներ: Տաղավարները համապատասխան վարձավճարով տրամադրել համայնքի բնակչությանը՝ առևտուր կազմակերպելու համար, գործունեության ընթացքում արդիականացնել, ընդարձակել և հնարավորություն ստեղծել հարևան համայնքների համար օգտվելու ընձեռված հնարավորությունից: Մեծ հաշվով ծրագիրը ծառայելու է նաև տարածաշրջանի այլ համայնքներին նույնպես և դառնալու է <<Համայնքային շուկա>>:

4.Համայնքային կենտրոնի վերանորոգում

Արջուտ համայնքը իր գոյության ընթացքում՝ 1989 թվականից, չունի որևէ ադմինիստրատիվ շենք, քանի որ դուրս է մնացել երկրաշարժի զարգացման գոտուց նախկին /թուրք/ բնակիչներ չունենալու պատճառով: 2010 թվականին համայնքային բյուջեի հաշվին գնվել է նախկին խորհտնտեսության ադմինիստրատիվ շենքը, որը պատկանում է այլ քաղաքացու: Շենքը վերանորոգելուց հետո կունենանք համայնքապետարան, գրադարան, սպորտդահլիճ, փոստ, ակումբ, ոստիկանության սենյակ, ԳԱՄԿ-ի սենյակ, սպորտհրապարակ, զրուցարան, որի իրականացման համար անհրաժեշտ է 25-30 մլն դրամ:

5.Մանկապարտեզի վերաբացում

Համայնքի մանկապարտեզի շենքը կառուցվել է 1991 թվականին՝ թեթև կոնստրուկցիայով, սակայն գտնվում է լավ պահպանված վիճակում, կոմունալ հարմարություններից և կոսմետիկ վերանորոգումից հետո կարելի է լիարժեք օգտագործել:Անհրաժեշտ է գազաֆիկացնել, վերանորոգել լուսավորությունը, ապահովել ջրով, բարեկարգել և կանաչապատել մանկապարտեզի տարածքը: Մանկապարտեզի շահագործման համար անհրաժեշտ է 12 մլն դրամ:

6.Խմելու ջրագծերի ներքին ցանցի նորոգում: Համայնքը խմելու ջրից օգտվում է ինքնահոս եղանակով, չունի կենտրոնացված ջրամատակարարում, ջրագծերը կառուցված են տարերայնորեն՝ 5,10,12,20 մարդկանցով, որը ոչ մի

ձևով վերահսկելի չէ, անհրաժեշտ է բոլոր ջրերը միավորել մեկ կամ երկու ջրամբարներում, կառուցել ներքին ցանց և բնակչությանը ապահովել շուրջօրյա ջրով, որի համար անհրաժեշտ է 20 մլն դրամ:

7. Ոռոգման ներքին ցանցի կառուցում

Ոռոգման ցանցը ներկա պահին ապահովում է միայն 40 հա տարածքի, կառուցելով 1500 գծամետր ներքին ցանց՝ ջրովի վարելահողերը կավելանան մինչև 100 հա: Ջրագծերի կառուցման համար անհրաժեշտ է 5 մլն դրամ:

8.Ներհամայնքային ճանապարհների վերակառուցում

Համայնքի կենտրոնական փողոցը, որը սկսվում է Վանաձոր-Երևան ավտոմայրուղուց մինչև համայնքի վերջը՝ 3000 մ, անհրաժեշտ է կապիտալ վերանորոգում, որի նախնական արժեքը կազմում է 25 մլն դրամ: Ծրագրի հաջողություն ունենալու դեպքում համայնքը կարող է տրամադրել պահանջվող ամբողջ խիճը, ինչպես նաև ունենա աշխատուժի մասնակցություն:

4.Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ֆինանսավորում

Համայնքի սեփական եկամուտներ 30 մլն դրամ

Ներքին պաշտոնական դրամաշնորհներ 150 մլն դրամ /համահարթեցում/

Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ 50 մլն դրամ

Բարեգործություն / նվիրատվություն 50 մլն դրամ

Վարկեր / փոխառություններ 100 մլն դրամ

Այլ աղբյուրներ 30 մլն դրամ

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի

Ծրագիր 1 – փողոցային լուսավորություն

2017-2021թթ իրականացնելու համար անհրաժեշտ է 12 մլն դրամ

	2017	2018	2019	2020	2021
Արժեք	3մլն	3մլն	2մլն	2մլն	2մլն
Միջոցներ	Համայնքային բյուջե	Համայնքային բյուջե	Համայնքային բյուջե	Համայնքային բյուջե	Համայնքային բյուջե

Ծրագիր 2-Գյուղատնտեսական ռեսուրսների օգտագործում

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 61 մլն դրամ: Համայնքը տրամադրում է իր ունեցած գյուղատնտեսական շարժական և անշարժ գույքը Արջուտ համայնքի արոտօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվին՝ 11 մլն դրամ արժողությամբ 3 տարի առանց վարձավճարի: Պետական բյուջեից նպատակային վարկ կամ փոխատվություն 10 տարի մարման ժամկետով:

Ծրագիր 3-Վաճառքի տաղավարների վերակառուցում

Ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ է 5 մլն դրամ

Տաղավարի գնում՝ 2.5 մլն դրամ՝ համայնքային բյուջե

Տաղավարների վերանորոգում՝2.5 մլն դրամ՝ համայնքային բյուջե և այլ աղբյուրներ:

Ծրագիր 4-Համայնքային կենտրոնի կառուցում

Ծրագրի իրականացման անհրաժեշտ է 30 մլն դրամ՝ 2019-2020թթ

Կոմունալ հարմարությունների ապահովում՝ լույս, գազ, ջուր՝ 5 մլն դրամ՝ համայնքային բյուջե

Շենքի վերանորոգում՝ 25 մլն դրամ՝ պետական բյուջե:

Ծրագիր 5-Մանկապարտեզի վերաբացում

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 12 մլն դրամ , 2017թ

Կոմունալ հարմարություններ՝ լույս, գազ, ջուր և բարենորոգում՝ 2 մլն դրամ՝ համայնքային բյուջե

Վերանորոգման աշխատանքներ՝ պետական բյուջե:

Ծրագիր 6-Խմելու ջրագծի նորոգում՝ 2017-2021

Խմելու ջրագծերի վերանորոգում՝ 10մլն դրամ՝ բարեգործություն

Արտեզյան հորերի կառուցում՝ 10մլն դրամ՝ բարեգործություն:

Ծրագիր 7-Ոռոգման ներքին ցանցի կառուցում՝ 2018-2019

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 5 մլն դրամ

Կիսախողովակների և խողովակների գնում՝ 400 000 դրամ՝ այլ աղբյուրներ

Խողովակների տեղադրում և փորձարկում 1 մլն դրամ՝ համայնքային բյուջե:

Ծրագիր 8-Ներհամայնքային ճանապարհների վերանորոգում՝ 2017-2021

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 252 մլն դրամ:

Ճանապարհների խճապատում՝ խիճ՝ 30 մլն դրամ՝ համայնքային բյուջե

Ընթացիկ վերանորոգում խճով և գրունտով՝ 2 մլն դրամ, ասֆալտապատում՝ 220 մլն դրամ՝ այլ աղբյուրներ: